ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 մարտի 2023 թվականի N 253-Ն

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐՑՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՎԵՐՑՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ (ՏԵՂԱՓՈԽՄԱՆ), ՎԵՐԱԲԵՌՆՄԱՆ (ԲԵՌՆՄԱՆ, ԲԵՌՆԱԹԱՓՄԱՆ) ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ, ԱՅԴՊԻՍԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՄ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՅԴ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՄ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ՝ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՅԴ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ, ԱՅԴՊԻՍԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ, ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԱՅԴՊԻՍԻ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՇՈՒՏ ՓՉԱՑՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 235-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել՝

1) մաքսային մարմինների կողմից վերցված ապրանքները վերադարձնելու ժամանակ վերցված ապրանքների փոխադրման (տեղափոխման), վերաբեռնման (բեռնման, բեռնաթափման) և պահպանման ծախսերի փոխհատուցման, այդպիսի ծախսերի կամ իրացման համար այդ ապրանքների նախապատրաստման կամ

իրացման ծախսերի՝ ապրանքների արժեքը գերազանցելու դեպքում այդ ապրանքների տնօրինման, այդպիսի ծախսերի հաշվարկի, իրացումից ստացված միջոցների հաշվին այդպիսի ծախսերի փոխհատուցման, ինչպես նաև իրացումից ստացված միջոցները հայտարարատուին վերադարձնելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) շուտ փչացող ապրանքների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ապրանքների իրացումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը, իսկ օգտագործումը կամ ոչնչացումը, ինչպես նաև ապրանքների փոխադրման (տեղափոխման), վերաբեռնման (բեռնման, բեռնաթափման), պահպանման կամ իրացման համար նախապատրաստման ծախսերի հաշվարկը և փոխհատուցումը՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

02.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ